ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Գնել Մկրտչյանը, Լավրիկ Արեվշատյանը, Արմեն Կոստանյանը, Վարդուհի Բաղալյանը, Էդգար Վարդանյանը, Նորայր Զախարյանը, Օհան Օհանյանը, Սամվել Զաքոյանը, Միքայել Միքայելյանը

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>
Գրիգոր Դաշտոյան, Գրիգոր Բոշյան, Արծրուն Ղուրշուդյան, Վարսենիկ Խաչատրյան, Դավիթ Մազմանյան, Արա Գեվորգյան, Անի Պողոսյան, Մուրադ Մովսիսյան

<u>Նիստը վարում էր Գավառ համայնքի ղեկավար՝ Գուրգեն Մարտիրոսյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր Գավառի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կարինե Մանուկյանը</u>

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Հաստատել Գավառ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 134-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ԵՐԱԶԱՆՔԻ ԱՅԳԻ» ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱԿՈԲ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հաշվի առնելով համայնքի զարգացման շահերը, ինչպես նաև «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ-ի կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) աջակցությամբ Գավառ համայնքում իրականացվող «Երազանքի այգի» ծրագրի կարևորությունը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Հաստատել «Երազանքի այգի» ծրագրի շրջանակում Գավառ համայնքի կողմից համաֆինանսավորման ապահովումը՝ 1,600,000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, ինչը համարժեք է 4000 (չորս հազար) ԱՄՆ դոլարի, որը կտրամադրվի ծրագրով նախատեսված նախագծային փաթեթի (չափագրություն, երկրաբանական հետազոտություն և եռաչափ մոդելավորում) ձեռքբերման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 135-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ԵՐԱԶԱՆՔԻ ԱՅԳԻ» ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱԿՈԲ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 34-րդ կետերով, ինչպես նաև «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի դրույթներով, նպատակ ունենալով ապահովել Գերմանիայի Միջազգային Համագործակցության Կազմակերպության (GIZ) կողմից ֆինանսավորվող և «ԲԼԵՋԱՆ» ՀԿ-ի հետ համատեղ իրականացվող «Երազանքի այգի» բնահեն լուծումներով կլիմակայուն համայնքային այգու ծրագրի հաջող իրականացումը՝
Գավառ համայնք ավագանին որոշում է

1. Որպես համայնքի ներդրում հաստատել Գավառ համայնքի կողմից «Երազանքի այգի» ծրագրի համաֆինանսավորման ապահովումը՝ 30,000 (երեսուն հազար) ԵՎՐՈ-ին համարժեք՝ 1,000,000 (տասներերք միլիոն) ՀՀ դրամի չափով: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 583 913 Եվրո, որից 553 913 Եվրոն ֆինանսավորվում է դոնորի կողմից:
2. Համայնքի ներդրումը նախատեսվում է տրամադրել ծրագրով սահմանված՝ նախագծման, տեխնիկական, ենթակառուցվածքային, մասնագիտական և այլ

անհրաժեշտ գործողությունների իրականացման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 136-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱԿՈԲ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 42-րդ կետերով՝ նպատակ ունենալով ձևավորել համայնքային մակարդակով մեդիագրագիտության, տեղեկացվածության և հանրային դիմակայունության բարձրացման քաղաքականություն՝ ուղղված ապատեղեկատվության բացասական ազդեցության նվազեցմանը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Հաստատել «Ապատեղեկատվության դեմ պայքարի տեղական հայեցակարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 137-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ քաղաքի Ազատության փողոց թիվ 16/7 հասցեի բնակարանը իր անվամբ սեփականացնելու մասին նշված հասցեի բնակիչ Լալա Գարսևանի Բրսիկյանի կողմից Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1.Գավառ քաղաքի Ազատության փողոց թիվ 39 բազմաբնակարան շենքի թիվ 37 բնակարանը (նախկին հասցեն՝ ք. Գավառ, Ազատության 16/7) և բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողատարածքի

համապատասխան բաժնեմասը սեփականության իրավունքով անհատույց օտարել Լալա Գարսևանի Բրսիկյանին՝ նրա հետ կնքելով նշված հասցեի անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 138-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի և «Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև 2021 թվականի օգոստոսի 10-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին Գավառ համայնքի ղեկավարին «Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հասցեագրած դիմումը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Համաձայնություն տալ երկարաձգելու «Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 2021 թվականի օգոստոսի 10-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը:
2. Պայմանագրի գործողության նոր ժամկետը սահմանել 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 139-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21/կետի դրույթներով, նկատի ունենալով, որ 2025 թվականի օգոստոսի 01-ին լրանում է Գավառ համայնքի և «Արաբկիր» բժշկական համալիր երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը, հիմք ընդունելով անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկու տարի ժամկետով ևս երկարաձգելու մասին «Արաբկիր» բժշկական համալիր երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ ՍՊԸ-ի տնօրենի Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Համաձայնություն տալ «Արաբկիր» բժշկական համալիր երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ երկարաձգելու 2020 թվականի հունիսի 08-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը:
2. Պայմանագրի գործողության նոր ժամկետը սահմանել 2027 թվականի օգոստոսի 01-ը ներառյալ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 140-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գերմանիայի միջազգային համագործակցության (GIZ) ֆինանսավորմամբ և «ԲԼԵՋԱՆ» հասարակական կազմակերպության ու Գավառի համայնքապետարանի համատեղ նախաձեռնությամբ Գավառ համայնքում մեկնարկվելիք «Երազանքի այգի» վերնագրով բազմաֆունկցիոնալ կլիմակայուն համայնքային այգու ստեղծման ծրագիրը, նկատի ունենալով, որ բնահեն լուծումներով բազմաֆունկցիոնալ կլիմակայուն քաղաքային այգու ստեղծման անհրաժեշտությունից ելնելով, Գավառի համայնքապետարանի առաջարկությամբ Գավառ քաղաքի բնակիչ Գարիկ Փայլակի Մինասյանը Գավառ համայնքին է վերադարձրել աճուրդային կարգով իր կողմից ձեռք բերված, սեփականության իրավունքով իրեն պատկանող Գավառ քաղաքի Ռ.Զախարյան փողոց N 2/1 հասցեի հողամասը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Աճուրդային կարգով Գավառ քաղաքի Ռ.Զախարյան փողոց N2/1 հասցեի հասարակական կառուցապատման հողամասի ձեռք բերման ու պետական գրանցման համար քաղաքացի Գարիկ Փայլակի Մինասյանի կողմից կատարած վճարների ու ծախսերի փոխհատուցման նպատակով նրան հատկացնել 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 141-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գերմանիայի միջազգային համագործակցության (GIZ) ֆինանսավորմամբ և «ԲԼԵՋԱՆ» հասարակական կազմակերպության ու Գավառի համայնքապետարանի համատեղ նախաձեռնությամբ Գավառ համայնքում մեկնարկվելիք «Երազանքի այգի» բնահեն լուծումներով բազմաֆունկցիոնալ կլիմակայուն քաղաքային այգու ստեղծման կարեւորությունը և նկատի ունենալով, որ Գավառի համայնքապետարանի առաջարկությամբ Գավառ քաղաքի բնակիչ Դավիթ Ֆրունզի Մազմանյանը Գավառ համայնքին է վերադարձրել աճուրդային կարգով իր կողմից ձեռք բերված, սեփականության իրավունքով իրեն պատկանող Գավառ քաղաքի Ռ.Զախարյան փողոց N 2 հասցեի հողամասը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Աճուրդային կարգով Գավառ քաղաքի Ռ.Զախարյան փողոց N 2 հասցեի հասարակական կառուցապատման հողամասի ձեռք բերման ու պետական գրանցման համար քաղաքացի Դավիթ Ֆրունզի Մազմանյանի կողմից կատարած վճարների ու ծախսերի փոխհատուցման նպատակով նրան հատկացնել 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 142-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գերմանիայի միջազգային համագործակցության (GIZ) ֆինանսավորմամբ և «ԲԼԵՋԱՆ» հասարակական կազմակերպության ու Գավառի համայնքապետարանի համատեղ նախաձեռնությամբ Գավառ համայնքում մեկնարկվելիք «Երազանքի այգի» բնահեն լուծումներով բազմաֆունկցիոնալ կլիմակայուն քաղաքային այգու ստեղծման կարեւորությունը և նկատի ունենալով, որ Գավառի համայնքապետարանի առաջարկությամբ Գավառ քաղաքի բնակիչ Հոռոմսիմե Արամի Գալստյանը Գավառ համայնքին է վերադարձրել աճուրդային կարգով իր կողմից ձեռք բերված, սեփականության իրավունքով իրեն պատկանող Գավառ քաղաքի Ռ.Զախարյան փողոց N 2/2 հասցեի հողամասը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1.Աճուրդային կարգով Գավառ քաղաքի Ռ.Զախարյան փողոց N 2 հասցեի հասարակական կառուցապատման հողամասի ձեռք բերման, պետական գրանցման, եռաֆազ էլեկրական հոսանքի միացման, նոր կառուցվող շինության, ինչպես նաև ջրային համակարգերի նախագծերի պատվիրման համար քաղաքացի Հոռոմսիմե Արամի Գալստյանի կողմից կատարած վճարների ու ծախսերի փոխհատուցման նպատակովնրան հատկացնել 1 425 000 (մեկ միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 143-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21/ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով անկախ գնատող «Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 07.08.2025թ. գնահատման արձանագրությունը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1.Գյուղատնտեսական մթերքների արտադրություն կազմակերպելու նպատակով Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-1133-0026 կադաստրային ծածկագրով 9,2174 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողն օտարել աճուրդային կարգով :

2. Հողատարածքի համար աճուրդի մեկնարկային գին սահմանել 18 934 000 /տասնութ միլիոն ինն հարյուր երեսունչորս հազար/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 144-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 31.07.2025թ. եզրակացությունը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել համապատասխան իրավաբանական կազմակերպությանը՝ սանտեխնիկա և համապատասխան պարագաներ «Աֆրիկյան Ջիմ» մարզասրահին տրամադրելու նպատակով: «Աֆրիկյան Ջիմ» մարզասրահի սանհանգույցը կարիք ունի հիմնանորոգման: Մարզասրահում մարզվելու են հաշմանդամություն ունեցող անձինք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 145-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 31.07.2025թ. եզրակացությունը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1.Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 704 000 (յոթ հարյուր չորս հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել համապատասխան բժշկական կենտրոնին՝ Գավառ համայնքի Զարգարյան փողոց տուն 50 հասցեի բնակիչ՝ Սամվել Երեմի Կիրակոսյանի վիրահատական ծախսերը հատուցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 146-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 31.07.2025թ. եզրակացությունը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել «Այգաբաց» ՍԲՋ ՀԿ-ին Գեղարքունիք բնակավայրի տարածքում աճող դեղաբույսերից, խոտաբույսերից էկո թեյերի հավաքածուների փաթեթավորումը կազմակերպելու նպատակով: «Այգաբաց» ՍԲՋ ՀԿ-ի կողմից ստեղծվելու է աշխատատեղ /աշխատատեղեր/ սոցիալապես անապահով անձանց զբաղվածությունը ապահովելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 147-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

եկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ

հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 08.08.2025թ. եզրակացությունը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1.Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 130 000 (մեկ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել համապատասխան բուժ սպասարկում իրականացնող կազմակերպությանը, Գավառ համայնքի Շահումյան փողոց 8/44 հասցեի բնակիչ Մամիկոն Ռաֆիկի Չատիկյանի վիրահատական միջամտության՝ այն է աջ թիակի տանձաձև ֆիքսացիա 2 պտուտակներով, կատարված ծախսերը հատուցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 148-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿՐՊԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006 թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք, Բոշնաղյան փողոց 8/1 կրպակ հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0377-0069 կադաստրային ծածկագրով, 0,00087 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը և Հարություն Գարսևանի Չքոյյանի կողմից կառուցված 4,88 քմ արտաքին (4,49 քմ ներքին) մակերեսով կրպակը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1877,7 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ յոթ) ՀՀ դրամ, իսկ կրպակի 1 քմ -ի համար 12 798 (տասներկու հազար յոթ հարյուր իննսունութ) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 149-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության՝ 26.05.2016թ. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման դրույթներով, ք. Գավառ Հ. Թումանյան փողոց 27/1 և 27 հասցեների սեփականատեր Արթուր Աշոտի Բոյախչյանի /ծնված 15.07.1987թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Հ. Թումանյան փողոց 13/1 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0376-0056 կադաստրային ծածկագրով, 0,007 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ք. Գավառ Հ. Թումանյան փողոց թիվ 27/1 և 27 հասցեների սեփականատեր Արթուր Աշոտի Բոյախչյանին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1877.7 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ յոթ տասնորդական) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 150-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 26.05.2016թ. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման դրույթներով, ք. Գավառ Գր.Լուսավորիչ փողոց 3 հասցեի սեփականատեր Հայկանուշ Ռաֆիկի Դաբաղյանին /ծնված 05.01.1975թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1.Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Գր. Լուսավորիչ փողոց 3/1 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0357-0016 կադաստրային ծածկագրով, 0,00305 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ք. Գավառ Գր. Լուսավորիչ փողոց 3 հասցեի սեփականատերեր Հայկանուշ Ռաֆիկի Դաբաղյանին և Տիրուշ Պապինի Խաչիկյանին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1877.7 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ յոթ տասնորդական) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 151-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 26.05.2016թ. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման դրույթներով, ք. Գավառ Զորավար Անդրանիկի փողոց 33/1 հասցեի սեփականատեր Հակոբ Գագիկի Հայթյանի /ծնված 27.03.1989թ./ Գավառ

համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 33/2 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0318-0042 կադաստրային ծածկագրով, 0,00058 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ք. Գավառ Զորավար Անդրանիկի փողոց 33/1 հասցե սեփականատեր Հակոբ Գագիկի Հայթյանին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1877.7 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ յոթ տասնորդական) ՀՀ դրամ: 3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 152-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 26.05.2016թ. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման դրույթներով, ք. Գավառ Ա. Ոսկանյան փողոց 5/80 հողամաս հասցեի սեփականատեր Արտյոմ Արայիկի Ցոգոլակյանի /ծնված 28.04.2000թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Ա. Ոսկանյան փողոց 5/81 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0293-0079 կադաստրային ծածկագրով, 0,00153 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ք. Գավառ Ա. Ոսկանյան փողոց 5/80 հասցեի սեփականատեր Արտյոմ Արայիկի Ցոգոլակյանին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1221.00 (մեկ հազար երկու

հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 153-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 26.05.2016թ. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման դրույթներով, ք. Գավառ Պետրովի փողոց 2 հասցեի սեփականատեր Արայիկ Նորիկի Խաչատրյանի /ծնված 26.06.1969թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Մ. Դաշտոյանի փողոց 1/1 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0374-0037 կադաստրային ծածկագրով, 0,00798 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ք. Գավառ Պետրովի փողոց 2 հասցեի սեփականատերեր Լուսինե Ալբերտի Սարինգուլյանին, Սամվել Խաչատուրի Ենգիբարյանին, Արայիկ Նորիկի Խաչատրյանին և Հերմինե Փայլակի Ղանթարչյանին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1221.00 (մեկ հազար երկու հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 154-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N609-Ն ու 2010 թվականի N208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշման և ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 30.07.2025թ. տրամադրված N2/փ-232 դրական եզրակացության պահանջներով՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

Համաձայնություն տալ
1. Գավառ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գավառ քաղաքային համայնքում գտնվող 05-001-1134-0026 կադաստրային ծածկագրով 12,0182 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական նպատակային նշանակության հողատեսքից փոխել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասի:
2. Հողամասի գործառնական նշանակությունը վարելահողեր գործառնական նշանակության հողատեսքից փոխել էներգետիկայի հողեր գործառնական նշանակության հողատեսքի:
3. Օրենքով սահմանված կարգով նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և համայնքի գլխավոր հատակագծում ապահովել սույն որոշումից բխող փոփոխությունները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հողամասի օտարման գործընթացը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 155-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N609-Ն ու 2010 թվականի N208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշման և ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 30.07.2025թ. տրամադրված N2/փ-233 դրական եզրակացության պահանջներով՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

Համաձայնություն տալ
1.Գավառ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գավառ քաղաքային համայնքում գտնվող 05-001-1134-0026 կադաստրային ծածկագրով 11,98185 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական նպատակային նշանակության հողատեսքից փոխել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասի:
2.Հողամասի գործառնական նշանակությունը վարելահողեր գործառնական նշանակության հողատեսքից փոխել էներգետիկայի հողեր գործառնական նշանակության հողատեսքի:
3.Օրենքով սահմանված կարգով նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և համայնքի գլխավոր հատակագծում ապահովել սույն որոշումից բխող փոփոխությունները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հողամասի օտարման գործընթացը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 156-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՏՈՒՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆՈՐԱՏՈՒՍ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Զեկ. ԱՐԾՐՈՒՆ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի Նորատուս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Նորատուս թիվ 1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող, 05-071-0210-0167 կադաստրային ծածկագրով, 10,60909 հա մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության, կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության հողամասից 0,08 հա մակերեսով հողատարածքում անասնագերեզմանոցի կառուցմանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 157-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՇԵՆ , ԲԵՐԴԿՈՒՆՔ ԵՎ ԼՃԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ և ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԾՐՈՒՆ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ)

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 21) կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» 2010թ. հունվարի 14-ի N16-Ն որոշման դրույթներով՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1.Համաձայնություն տալ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Ծաղկաշեն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, օգտագործման սահմանափակումներ չունեցող 05-046-0104-0025 կադաստրային ծածկագրերով, 3,44814 հա մակերեսով, 05-046-0133-0024 կադաստրային ծածկագրով, 1,58273 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, Բերդկունք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, օգտագործման սահմանափակումներ չունեցող 05-020-0103-0026, 05-020-0103-0023, 05-020-0103-0024, 05-020-0301-0017, 05-020-0103-0019, 05-020-0103-0018, 05-020-0103-0013, 05-020-0103-0029, կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության արոտավայրերը, 05-020-0101-0036, 05-020-0102-0118, 05-020-0102-0131, 05-020-

0102-0124, 05-020-0102-0157, 05-020-0102-0112, 05-020-0102-0155, 05-020-0103-0015, 05-020-0103-0014, 05-020-0103-0020, 05-020-0103-0016, 05-020-0102-0159, 05-020-0103-0022, 05-020-0102-0156, 05-020-0102-0160, 05-020-0101-0051, 05-020-0101-0053, 05-020-0102-0165, 05-020-0101-0038, 05-020-0101-0001, 05-020-0101-0043, 05-020-0101-0041, 05-020-0101-0045, 05-020-0102-0163, 05-020-0102-0164, 05-020-0102-0162, 05-020-0102-0161,05-020-0102-0149, 05-020-0102-0147, 05-020-0101-0030, 05-020-0101-0029, 05-020-0101-0033, 05-020-0102-0140, 05-020-0102-0146, 05-020-0102-0148, 05-020-0102-0143, 05-020-0101-0031, 05-020-0102-0141, 05-020-0102-0138, 05-020-0102-0139, 05-020-0102-0145, 05-020-0102-0142, 05-020-0102-0137, 05-020-0101-0014, 05-020-0102-0129, 05-020-0102-0130, 05-020-0102-0125, 05-020-0102-0120, 05-020-0101-0016, 05-020-0101-0011, 05-020-0101-0015, 05-020-0102-0113, 05-020-0102-0121, 05-020-0101-0010, 05-020-0103-0012, 05-020-0102-0111, 05-020-0102-0136, 05-020-0102-0134, 05-020-0101-0035, 05-020-0102-0152, 05-020-0102-0150, 05-020-0101-0017, 05-020-0101-0023, 05-020-0101-0024, 05-020-0102-0133, 05-020-0101-0034, 05-020-0102-0135, 05-020-0101-0018, 05-020-0101-0022, 05-020-0102-0132, 05-020-0101-0019, 05-020-0101-0020, 05-020-0101-0025, 05-020-0101-0028 կադաստրային ծածկագրերով վարելահողերը, 05-020-0102-0153 կադաստրային ծածկագրով այլ հողեր գործառնական նշանակության հողատարածքը, Լճափ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային՝սեփականություն հանդիսացող, 05-042-0103-0004, 05-042-0103-0002, 05-042-0103-0003 կադաստրային ծածկագրերով վարելահողերը գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով 2049 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով մրցույթով տրամադրելու վարձակալության:

2.Նշված հողատեսքերից 2-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը սահմանել՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/, ՀՀ դրամ, 2-րդ կարգի մեկ հեկտար արոտավայրի տարեկան վարձավճարը սահմանել՝ 4500 /չորս հազար հինգ հարյուր/, ՀՀ դրամ, 4-րդ կարգի մեկ հեկտար արոտավայրի տարեկան վարձավճարը սահմանել՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/, ՀՀ դրամ, մեկ հեկտար այլ հողեր հողատեսքի տարեկան վարձավճարը սահմանել՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/, ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 158-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՎ Պ. ՍԵՎԱԿ ԹԱՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՐԾՐՈՒՆ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ)

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 77-78-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով 2025 թվականի հունիսի 23-ին Կարմիրգյուղ

բնակավայրի Ս. Ավետիսյան և Պ. Սևակ փողոցներում գտնվող ոռոգման համակարգերը համայնքին հանձնելու և հետագայում «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու վերաբերյալ բնակիչների ստորագրությամբ վարչական ղեկավարի կողմից կազմված արձանագրությունները՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1.Գավառ համայնքի Կարմիրգյուղ բնակավայրի Ս.Ավետիսյան և Պ.Սևակ թաղամասերում գտնվող ոռոգման համակարգերը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 159-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԾՐՈՒՆ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21/կետի, «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ, 30-րդ, և 40-րդ հոդվածների, ՀՀ ջրային օրենսգրքի 61.1-րդ և 61.2-րդ հոդվածների դրույթներով՝ ***Գավառ համայնք ավագանին որոշում է***

1.Գավառ համայնքի Կարմիրգյուղ բնակավայրի սեփականություն հանդիսացող, Ս.Ավետիսյան, Պ.Սևակ, Հողագործների փողոց հասցեներում գտնվող և «Մուքոյ տախտակ» կոչվող հողատարածքները ինքնահոս եղանակով ոռոգող 985 մետր երկարությամբ ջրատար առուները մինչև 2049 թվականի ոռոգման սեզոնի մեկնարկը օգտագործման ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերությանը՝ ջրօգտագործող բնակչության ոռոգման ջրամատակարարումն ապահովելու նպատակով:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 160-Ա)*

Ավագանու անդամներ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՀՐԱՅՐ ԳՈՒԼԱԲՅԱՆ

ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՕՆԻԿ ԴԱՆՈՅԱՆ

ԱԼԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՆՈՒՆԵ ՄԻՐԻԲՅԱՆ

ԱՆԻ ՊԵՏՈՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՐԻԲՅԱՆ

ԶԱՐՈՒՀԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ԽԱՆԴԱՆՅԱՆ

ՎԱԼՏԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կարինե Մանուկյանը

_____